ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 օգոստոսի 2026 թվականի N 523-Ա

ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարություն համակարգող նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 10-ի N27-Ն հրամանը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Հաստատել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-29) և զարգացման, ծրագրերի, տուրիզմի, առևտրի սպասարկման և գովազդի բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-10) համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը՝

1)Լիլիթ Քոչարյան -Լոռու մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչ,
2)Արուս Թումանյան - Լոռու մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչ,
3)Էդգար Արշակյան-Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
4) Հովիկ Մարկոսյան-Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
5)Անուշ Սուքիասյան - ավագանու անդամ,
6)Ասյա Տոնոյան -ուսումնական հաստատության ներկայացուցիչ:

2. Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար համակարգչային աշխատանքների պատասխանատու նշանակել Արթուր Կիրակոսյանին:

3. Հանձնաժողովի աշխատանքների բնականոն ընթացքը և իրականացումն ապահովելու նպատակով Մրցույթի անցկացման պատասխանատու նշանակել Նունե Սոլոյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. օգոստոսի 03
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 օգոստոսի 2026 թվականի N 524-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ

Հիմք ընդունելով 24/07/2026-ի Լոռու մարզի մարզպետի N 01/106,3,2/06396-2026 գրությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 479452 վկայականը, և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի, Տաշիր համայնք գյուղ Պրիվոլնոյե դպրոց հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Մարզ Լոռի, համայնք Տաշիր, գյուղ Պրիվոլնոյե, 1-ին փողոց, 55 դպրոց հողամաս հասցեն, համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր (06232CTVBNXH):

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. օգոստոսի 04

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 օգոստոսի 2026 թվականի N 525-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Սրպուն Սերոպի Գալստյանի (ծնված՝ 18.08.1946թ., անձ. 67 N-3702864) կողմից լիազորված անձ Էդուարդ Միշայի Զատինյանի (ծնված՝ 05.04.1978թ.) դիմումը, «Գուգարած Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայրում գտնվող, 06-008-0100-0017 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր, քաղաք Տաշիր, Սայաթ-Նովա փողոց, 7 բնակելի տուն հասցեն (փոստային դասիչ՝ 2101), համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06011YV2TD28:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. օգոստոսի 04

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 օգոստոսի 2026 թվականի N 526-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՎԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-076-0102-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2026C7VE7A, «Միեր Գևորգյան» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Տաշիր համայնքի Մեղվահովիտ բնակավայրում գտնվող 06-076-0102-0013 կադաստրային ծածկագրով 0.54254 հեկտար մակերեսով հողամասի վրա 2001 թվականին կառուցված հասարակական նշանակության շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև այն հանգամանքը, որ վերը նշված կառույցի քաղաքաշինական փաստաթղթերը չեն պահպանվել.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տաշիր համայնքի Մեղվահովիտ բնակավայրում գտնվող, 06-076-0102-0013 կադաստրային ծածկագրով 0.54254 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 454.6 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով հանրակրթարանը ճանաչել օրինական:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հատակագիծը, հողամասի մակերեսը փաստացի չափագրման արդյունքում կազմում է 0.54254 հեկտար:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. օգոստոսի 04

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 օգոստոսի 2026 թվականի N 527-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ

Հիմք ընդունելով «Նավիգ» ՍՊԸ տնօրեն Քերոբ Տոմերյանի(ծնված՝ 19/06/1974թ.) դիմումը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 2461017վկայականը, և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի, Տաշիր համայնք քաղաք Տաշիր Կիրովի 14-րդ փողոց հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Մարզ Լոռի, համայնք Տաշիր, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, 368/6 արտադրամաս հասցեն, համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր (06011LUM6N6Z):

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. օգոստոսի 05

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 օգոստոսի 2026 թվականի N 528-Ա

«ՆՈՎԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նովա կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի օգոստոսի 05- ի N147-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության 45 -րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 226,228, 6 հասցեում գործող «Նովա կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր մարմնի ղեկավար Արման Նարգիզյանի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի երրորդ եռամսյակի համար համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. օգոստոսի 05

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 օգոստոսի 2026 թվականի N 529-Ա

«ՆՈՎԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նովա կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի օգոստոսի 05- ի N148-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության 45 -րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 226,228, 6 հասցեում գործող «Նովա կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր մարմնի ղեկավար Արման Նարգիզյանի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի երրորդ եռամսյակի համար համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. օգոստոսի 05

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 օգոստոսի 2026 թվականի N 530-Ա

«ՆՈՎԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նովա կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի օգոստոսի 05- ի N149-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 226,228, 6 հասցեում գործող «Նովա կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր մարմնի ղեկավար Արման Նարգիզյանի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի երրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. օգոստոսի 05

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2026 թվականի N 531-Ա

ԼԻԱՆՆԱ ԼԻՈՆԻԴԻ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԱՅՑՈՎ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»N 631-Ն , Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի սեպտեբերի 25-ի « Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը եվ պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն որոշումներով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին կից «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 31-ի թիվ 8 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Դիմել դատարան ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի բնակիչ Լիաննա Լիոնիդի Բեկնազարյանին անգործունակ ճանաչելու հայցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. օգոստոսի 06

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2026 թվականի N 532-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Միեր Գևորգյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայրում գտնվող, 06-076-0102-0013 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր, Մեղվահովիտ, 1-ին փողոց, 20 հողամաս հասցեն (փոստային դասիչ՝ 2105), համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06082EHT2W8X:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. օգոստոսի 06

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2026 թվականի N 533-Ա

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱ ՎԱՐԴԱՆ ԱՐԹՈՒՐԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ԱՍՅԱ ԲՈՒԳԴԱՆԻ ԲԱՐՈՅԱՆԻՆ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշումով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի արտահերթ նիստի 2026 թվականի հուլիսի 31-ի թիվ 8 արձանագրությունը և մասին Ասյա Բուգդանի Բարոյանի իր պարտականությունների կատարումից ազատելու մասին դիմումը (մուտք՝ 30.07.2026-ի ՔԴ599-26)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անչափահաս Վարդան Արթուրի Ասատրյանի խնամակալ Ասյա Բուգդանի Բարոյանին ազատել իր պարտականությունների կատարումից՝ երեխայի կենսաբանական հոր Հայաստանի Հանրապետություն վերադառնալու և սահմանված կարգով հայրությունը ճանաչելու պատճառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. օգոստոսի 06

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2026 թվականի N 534-Ա

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱ ԱԼՅՈՆԱ ԱԼԵՔՍԵՅԻ ՇԵԼԵԳԱՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ԼՈՐԵՏԱ ՆԻԿԱԼԻ ՅԱՎՐՈՒՄՅԱՆԻՆ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-ՐԴ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշումով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի արտահերթ նիստի 2026 թվականի հուլիսի 31-ի թիվ 8 արձանագրությունը և մասին Լորետա Նիկալի Յավրումյանի՝ իր պարտականությունների կատարումից ազատելու մասին դիմումը (մուտք՝ 28.07.2026-ի ՔԴ587-26)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անչափահաս Ալյոնա Ալեքսեյի Շելեգայի հոգաբարձու Լորետա Նիկալի Յավրումյանին ազատել իր պարտականությունների կատարումից՝ հոգաբարձուի բնակության վայրի փոփոխության և խնամարկյալի հետ համատեղ բնակվելու անհնարինության պատճառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. օգոստոսի 06

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2026 թվականի N 535-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԴՈՒՄԻԿՅԱՆ ԴԱՎԻԹ»-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Դումիկյան Դավիթ»-ի 2026 թվականի օգոստոսի 06 -ի N150-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության 45 -րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 239 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Դումիկյան Դավիթ»-ի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի երրորդ եռամսյակի համար համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. օգոստոսի 06

ք.Տաշիր